ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ մասնակից պետություններ,

ղեկավարվելով 1992 թվականի մարտի 20-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության Սահմանապահ զորքերի կարգավիճակի մասին Համագործակցության մասնակից պետությունների ղեկավարների Համաձայնագրով,

հաշվի առնելով Սահմանապահ զորքերի զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների, բանվորների եւ ծառայողների բժշկական ապահովության, ինչպես նաեւ նրանց առողջության պահպանման առանձնահատկությունները, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սահմանապահ զորքերի զինծառայողները, բժշկական ցուցանիշների առկայության դեպքում, ուղարկվում են Սահմանապահ զորքերի ռազմաբժշկական հաստատություններ եւ այդտեղ բժշկական օգնություն են ստանում: Ծառայության կամ բնակության վայրում Սահմանապահ զորքերի ռազմաբժշկական հաստատությունների, ինչպես նաեւ մասնագիտական բժշկական օգնության որոշ տեսակների ցուցաբերման հնարավորության բացակայության դեպքում եւ, անհետաձգելի դեպքերում, բժշկական օգնությունը ցուցաբերվում է մասնակից պետությունների առողջապահության բոլոր հաստատություններում, ներառյալ՝ անձնակազմի առողջության պահպանման նպատակով լաբորատոր եւ գործիքային հետազոտությունների անցկացումը:

ՀՈԴՎԱԾ 2

Սահմանապահ զորքերի զինծառայողների, բանվորների եւ ծառայողների ընտանիքների անդամներին բժշկական օգնություն ցուցաբերվում է համապատասխան մասնակից պետությունների օրենսդրությունների հիման վրա, իրենց քաղաքացիների հետ նույն պայմաններով:

Սահմանապահ զորքերի զինծառայողների ընտանիքների անդամները, բանվորները եւ ծառայողները կարող են բժշկական օգնություն ստանալ Սահմանապահ զորքերի բուժհաստատություններում:

ՀՈԴՎԱԾ 3

Սահմանապահ զորքերի զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների, բանվորների եւ ծառայողների սանատորառողջարանային բուժումը եւ կազմակերպված հանգիստը իրականացվում է Սահմանապահ զորքերի առողջարաններում եւ հանգստյան տներում մասնակից պետությունների այլ գերատեսչություններում պայմանագրային հիմունքներով՝ հաշվի առնելով Համագործակցության մասնակից պետությունների նորմատիվ ակտերով եւ համաձայնագրերով սահմանված արտոնությունները:

ՀՈԴՎԱԾ 4

Մանկական նախադպրոցական հաստատություններում Սահմանապահ զորքերի զինծառայողների, բանվորների եւ ծառայողների երեխաներին պահելու ծախսերը կատարվում են այն մասնակից պետության օրենսդրությամբ սահմանված կարգով եւ չափերով, որի տարածքում գտնվում է մանկական հաստատությունը:

Վերոհիշյալ դասի անձանց ծառայության կամ բնակության վայրում Սահմանապահ զորքերի մանկական հաստատությունների եւ առողջարանային ճամբարների բացակայության դեպքում իշխանության տեղական մարմինները եւ Համագործակցության

մասնակից պետությունների գերատեսչությունները Սահմանապահ զորքերի զինծառայողների, բանվորների եւ ծառայողների երեխաներին տեղեր են հատկացնում նախադպրոցական հաստատություններում եւ առողջարանային ճամբարներում:

ՀՈԴՎԱԾ 5

Սահմանապահ զորքերում առողջարանահիգիենիկ եւ հակահամաճարակային միջոցառումները իրականացվում են մասնակից պետությունների օրենսդրություններին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 6

Սահմանապահ զորքերի բժշկական անձնակազմի որակավորման բարձրացումը իրականացվում է Համագործակցության մասնակից պետությունների բժշկական եւ միջին բժշկական անձնակազմի որակավորման բարձրացման հաստատություններում:

ՀՈԴՎԱԾ 7

Բժշկական գույքի եւ դեղորայքի մատակարարումը իրականացվում է անմիջականորեն Համագործակցության պետություններում պատվերի հայտարարման, ինչպես նաեւ Սահմանապահ զորքերի միջպետական կոմիտեի միջոցով:

ՀՈԴՎԱԾ 8

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կատարված է Մինսկ քաղաքում 1992 թվականի հունիսի 26-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենները:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի հունիսի 26-ից: